

ՔՍԱՆԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԱՍԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարեկանը 6 ռուբլի.
Առանձին համարները 7 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Маск».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնները համար վճարում են
խաւքանչիւր ըստ ին 2 կոպեկի.

ՀԱՄԱՐԱԿԻԱՆ ԲԱՐՔԵՐԻ ԱՆԿԻԱՆ ԱՊԱՅՈՂՈՅՆԻՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Գաղթականների հարցն էր. — Ներքին ՏԵՍՈՒ-
ԹԻՒՆ. Մեծածախ առևտուրը թիֆլիսյան քաղաքում
հարկավոր էր հարցը. Նամակ բաժնուրդի. Ներ-
քին լուրեր. — ԱՐՄԱՐԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Տեղե-
կութիւններ թիֆլիսյան հայաստանից. Իրանական
պատգամաւորներ. Նամակ Պարսկաստանից. Ար-
տաքին լուրեր. — ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ. — ՀԵՌԱՎԻՐՆԵՐԻ
— ԲՈՐՍԱ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱ-
ԿԱՆ. Նամակ Շվեյցարիայից.

ԳԱՂԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՅՐԵՆԻՒԹՅՈՒՆ

Թիֆլիսյան Հայաստանից ստացվող տե-
ղեկութիւնները ստիպում են մեզ մի քանի
խօսք աւելացնել «Մշակի» անցեալ համա-
րում տպագրված յօդուածին, որը վերաբը-
րում էր գաղթականներին:

Թիֆլիսյան Հայաստանի այն գաղթական-
ները, որոնք ուշացան և ապրիլ ամսին կամ
մայիս ամսի սկիզբներին իրանց հայրենիքը
չէր վերադարձան, թողնել ուրեմն իրանց բը-
նիկ երկրում իրանց արտերն առանց հեր-
կուր, առանց ցանկուր: Դա մի շատ անուր
հանգամանք է, որովհետև միանգամայն ու-
րիշ անբարեկամ չհանգամանքների հետ
շարունակում է աղէտի սուր աղբյուրները
և ապագայում:

Գաղթականութեան և առհասարակ աղ-
քատութեան պատճառով Թիֆլիսյան Հայաս-
տանի մի քանի մասերում վերջին տարիներ-
ըստ սկսվել է նկատվել որ արտերի
մի մասը մնում է առանց ցանկուր, խա-
մանում, խողանանում է և դառնում
խոտահար կամ ինչպէս տեղացիները ա-
նուանում են, հարուստ Այս տարի այդ հա-
րանների քանակութիւնը չափազանց կը մե-
ծանայ և միայն մի բան կարող է աւելաց-
նել գիւղացու անտեսութեանը՝ այն է խոտ,
անասունների կերակուրը:

Իսկ ինքը երկրագործը ի՞նչ պէտք է ա-

նի առանց հացի: Ահա մի սոսկալի հարց,
որ ծագում է դեռ այն րօպէին, երբ հին
տարին նոր է միայն վերջանում: Գիւղացին
առանց վարելու, առանց ցանքսի նոյն կա-
րօտ, անհաց գիւղացին է, որը այսօր պար-
զում է իր ձեռքը ողորմութիւն ինչպէս
Գիւղացուն մի բան է մնում, այն է անասնա-
պահութեանը զբաղվել: Այդ բանը փոքր ի
շատէ կարող է օգնել գիւղացուն միայն այն
դէպքում, երբ անասնապահութիւնը մեծ
գիւղացու առջը դնայ և տայ գիւղացուն
աչքի ընկնող եկամուտ: Այդպիսի գիւղեր
շատ են և եղածներն էլ զրկված են այն-
պիսի վաճառանոցներից, ուր կարելի լի-
նէր նրանց անասնապահական արդիւնքները
շահաւէտ գնով վաճառել:

Այդպիսով տեղական արդիւնքները շուտ
չեն հասնում մեծ վաճառանոցները. իսկ
պահպանող գիւղացին էլ կարողանում շուտ-
շուտ երթևեկութիւն անել իր հայրենիքը:

Եթէ ուշի ուշով քննենք, կը տեսնենք որ
իսկապէս ժողովրդի պահանջը շատ քիչ է և
հասարակ չա ուղում է ապրել իրեն աղ-
նիւ մշակ, իրեն ապահով մի երկրագործ,
որ կարողանայ ինքն ապրել իր ընտանիքը
ապրեցնել, իր զաւակներին հարկաւոր կը
թուլթուլ ատր, կատարել իր պարտաւորու-
թիւնները դէպի իր համայնքը և դէպի
պետութիւնը, կարողանայ արդար զատ
գանձել իր առօրեայ դանդաղների համար
և ենթակայ չը լինի կամայականութեան:

Երկրագործ ժողովուրդը չէ սիրում յուզ-
մունքներ: Նա խաղաղ բնաւորութիւն ունի
և սիրում է հանգիստ կեանք: Պէտք է
թանգ գնահատել այդ հանգամանքը և
գաղթականութեան չենթարկել նրա խաղաղա-
սէր, համբերող ոգին:

Իսկ եթէ երկար կը շարունակվի ներկայ
անմիջիցս և անտանկի վիճակը ժողով-
րդը կը ստուշի դէպի դարեւան փայ-
վայած իր ծննդավայրը ու ձեռք կանի
պանդխտութեան ցուպը բաղդ որոնելու:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԵՌԱՎ ԳԱՏԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Հասարակական բարքերի անկման ապացոյցնե-
րից մէկն էլ հասարակութիւնը կազմող անհա-
տի մեծածախ առևտուրը: Պատուա-
րութիւնը մեր բարոյական ներքին աշխարհի
պաշտպանութիւնն է: Խղճալի է այն հասարա-
կութիւնը, այն անհատը, որը զուրկ է ինքնա-
սիրութեան, պատասխարթեան զգացմունքից:
Դա ապացոյց է նրա թշուառ բարոյականութեան,
նրա համոզմունքների աղքատութեան:

Նայենք մեր շուրջը, ակնաչ գնենք մի րօպէ,
և կը համոզվենք, որ մեր ինքնասիրութիւնը, մեր
պատասխարթեան զգացմունքը մեծած է, որ
մենք բարոյական հիւսններ ենք՝ անկարող
պաշտպանելու այն սկզբունքները, որոնց անու-
նով շատ անգամ մենք երգում ենք մեր առանձ-
նասնեկաններում:

Միթէ մեծած ինքնասիրութեան, բացակայող
պատասխարթեան ապացոյց չէ այն փաստը, երբ
զուր տեսնում եք, թէ ինչպէս հասարակական գոր-
ծունէութեան մէջ գտնված մի անձի, զիջու-
ղացի մի հողարարածի, կամ եկեղեցու երե-
ւոյն, կամ թէ մի ընկերութեան վարչութեան
անդամ մեղադրում էք, որ նա աղուութեամբ չէ
կատարում իր ստանձնած պաշտօնը, որ նա ու-
նում է իրան յանձնված հասարակական դրամնե-
րը, կամ իր անարժան, անբարեխղճ բարեկամնե-
րով տիրել է մի դպրոցի, և նա, այդ բոլորը
բարձրաձայն լսելուց յետոյ, փոխանակ վրդովի-
ւոր, պաշտպանվելու, անտարբերութեամբ լուծ
է, կամ հասարակութեան արդարացի բաղձները
չը լսած է ձեռնառնում և շարունակում է նոյն
ընթացքը:

Միթէ մեծած չէ մի հասարակութեան պատ-
ասիրութիւն, երբ մի որ և է վարդապետ եկե-
ղեցու բնից հարիւրաւոր անձանց անպատու և
ստոր, փողոցային հայհոյանքներով, և եկեղեցու

խմբված հասարակութիւնը, փոխանակ վրդովիւ-
րած անբարոյական բաւերի համար և քարոզիչ
վարդապետից բացատրութիւն պահանջելու, ան-
տարբերութեամբ լուծ է իր կնոջ և երեխա-
ների դիմաց արտայայտված անհերքելի բաւերը և
անվրդով հեռանալով եկեղեցուց, միւս օրը մո-
ռանում է այդ բոլորը...

Միթէ հասարակութեան պատասխարթեան
կատարել մեղքութեան նշան չէ, երբ մի ողոր-
մելի վարդապետ, զինված ուսման, գիտութեան
և լուսաւորութեան դէմ, ամեն քայլափոխում հա-
լածում է դրանց ներկայացուցիչներին կամ օժան-
դակներին: Հասարակութիւնը գիտէ այդ բոլորը
և փոխանակ ամեն ճիշդ թափելու այդպիսիներին
իր չրջանից հեռացնելու, դեռ ևս նոյն հասարա-
կութեան միջից այդ վարմունքը գովաբանողներ
են գտնվում:

Միթէ մեծած չէ այն միաբանութեան պատուա-
սիրութիւնը, երբ նա գիտէ, որ բոլորն էլ նրա
անդամներից շատերին մեղադրում են աշխարհ
գործութեան, ժողովրդական նուիրատուութիւնները
տակն անելու, խարդախութեան մէջ, և նրանք,
այնու ամենայնիւ, իրանց ընկած համբաւով, փո-
խանակ պաշտօնից հեռանալու, դարձեալ ամեն
ստոր միջոցներ և չողորմութիւններ գործ են
դնում իրանց ձեռքում պահելու արդիւնաւոր
տեղը: Եւ այդ բոլորը չէ վրաւորում ոչ զքի
պատասխարթութիւնը...

Միթէ իր բարոյական աղքատութիւնը չէ ապա-
ցուցանում այն խմբագիրը, հեղինակը, գործիչը,
որ իւրաքանչիւր սեղմում փոխում է իր դի-
մակը, բարոյները, գաղափարները՝ միմյան հա-
խարհի մեծերին դուր գալու, նրանց ձեռնառու
հովանաւորութիւնը վայելելու համար, որը, սա-
կայն, տեսնելով, թէ իր դիմակը պատուված է, թէ
իր իսկական պատկերը ճանաչված է, այնու ա-
մենայնիւ, շարունակում է իր ստոր գործը՝ յա-
նուն իր թէ գաղափարների, որոնց նա ամեն
քայլափոխում դաւաճանում է:

Եւ վերջապէս ինչ անուն տալ այն երեւոյթին,

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿ ԵՎ ԼՅՅԱՐԻՍՏՈՒՆ

Ժընէվ, մայիսի 17-ին

Նախընթաց երկու ամիսներում Շվեյցարիայում
տեղի ունեցան մի քանի ուշադրութեան արժանի
անցքեր, որոնք այստեղի համար կարեւոր նշանա-
կութիւն ունեն: Նախ՝ տեղական ամենաուսեղ ար-
մատական կուսակցութիւնը մի ընդհանուր ժո-
ղով ունեցաւ Սոցիալ կանտոնի Օլտըն քաղաքում,
ուր հաւաքվել էին 400-ից աւելի ներկայացուցիչ-
ներ՝ երկրին վերաբերեալ քաղաքական և հասա-
րակա-անտեսական զանազան խնդիրներ ընկելու և
վճռելու: Դաշնակցական պարլամենտների մշակած
մի նոր օրէնքի մասին ժողովուրդը պէտք է յայտնէր
իր շարժան կամ չոչնդ: մի այլ օրէնք՝ որ ժողո-
ղովրդի նախաձեռնութեամբ էր առաջարկվում,
պէտք է ընկնէր նոյն պարլամենտներում Առաջին
և երկրորդ հարկերը թողնելով մի այլ անգամ,
այժմ մենք կը խօսենք երկրորդի մասին:

Դաշնակցական պարլամենտները կամենում էին
դաշնակցական սահմանադրութեան մէջ մտցնել
մի նոր օրէնք, կամ՝ ուղղիւն տաւ, մի նոր յօդուած,
որը կայանում էր հետեւեալում. «Դաշնակցութիւ-
նը իրաւունք ունի սահմանել արհեստների վե-
րաբերմամբ միակերպ պատուէրներ: Այս յօդ-
ուածը ընկնել էր պարլամենտներում և ձայների
աչափին մեծամասնութեամբ անցել: մնում էր, որ
ժողովուրդը յայտնէր իր համաձայնութիւնը,
իր շարժան կամ չոչնդ: Ժողովուրդը, ձայների
մեծամասնութեամբ, յայտնեց չոչնդ, օրէնքը չըն-

դունվեց, հետեւաբար նա չը մտաւ դաշնակցական
սահմանադրութեան մէջ:

Այդ նոր յօդուածով Շվեյցարական Դաշնակցու-
թիւնը կամենում էր մի որոշ սխառմ մտցնել բար-
ւոյն արհեստաւորների, փոքրիկ գործարանների
բանաւորների դրութիւնը: Մեծ գործարանների բան-
ւորների համար դաշնակցական սահմանադրութեան
մէջ արդէն գոյութիւն ունեն մի շարք օրէնքներ:
Վարդ է, որ կարել էր զգալիւ համամասն օրե-
նադրութեան և փոքրիկ գործարանների բանաւոր-
ների համար. դաշնակցական կառավարութիւն
ուղում էր այդ պակասը լրացնել, բայց ժողո-
վուրդը նրան մերժեց. թէ ինչպէս, մենք կը խօսենք
ներքեւում, իսկ այստեղ՝ առիթից օգտու ճաղելով,
մենք ուղում ենք համառօտ կերպով ծանօթացնել
վերոյիշեալ օրէնադրութեան գլխաւոր կէտերի
հետ:

Դաշնակցական այդ օրէնադրութիւնը սկիզբն է
առնում 1874 թվին, ուղղիւն տաւ 1875 թին, ո-
րովհետև 74 թվին Դաշնակցութիւնն իրաւունք է
ստանում բանաւոր դասակարգի դրութիւնը քիչ
բարեւելու համար օրէնքներ ստեղծել, միայն հե-
տեւել թուականին է գործ զրկում յիշեալ օ-
րէնադրութիւնը, որ մի քանի փոփոխութիւններով
և յաւելուածներով գոյութիւն ունի մինչև օրս:

«Առաջին պայմանը, առանց որի բարեւոյն
քիչ ժամերի սահմանափակումն է. այսպէս յայտա-
բարեցին դեռ 1867 թվին միջազգային բանաւ-
րական առաջին ժողովում: Այժմ աշխատելու
ժամերի սահմանափակումը երկրաշնչի համարեա
բոլոր բանաւորական կազմակերպութիւնների առա-
ջին պահանջներից մէկն է կազմում: Ուրիշ ժա-
միկ օրը՝ անգլիական պարլամենտի հերթական

հարցերից մէկն է: Շվեյցարական պարլամենտը
1877 թվականին որոշեց, որ աշխատելու ժամերի
թիւը 11-ից երբեք չը պէտք է անցնի. կիրակի և
տօների նախընթաց օրը նա 10 ժամ է, եթէ առող-
ջութեան վնասակար աշխատանք է, դաշնակցական
խորհուրդը, պահանջին նայած, ժամերի թիւը
էլի է պակասեցնում: Կիրակի օրվայ աշխա-
տանքը, բացի ամենաբացառիկ դէպքերից, արգի-
ված է: Գիշերվայ աշխատանքը նոյնպէս իրեն
բացառութիւն է ընդունվում, և այն էլ բանաւոր-
ների ազատ կամքիցն է կախված բանել, չը բա-
նելը:

Յիշ կանայք ծնողեան ժամանակ 8 շաբաթ աշ-
խատանքից պէտք է բոլորովին ազատ լինեն. նը-
րանց համար նշանակված են արդիւնադրու-
թեան որոշ ճիւղեր: Առհասարակ արդիւնված է
կանանց մաքրել տալ մեքենաները՝ սրանց շարժ-
ման ժամանակ և այլ վտանգաւոր անօթներ ու
գործիքներ: Կիրակի օրվայ և գիշերվայ աշխա-
տանքը կանանց համար բոլորովին ոչնչացրած է:
Երեւանները մինչև 14 տարեկան հասակի լրա-
նալը գործարաններում չեն ընդունվում: 15-ից
մինչև 16 տարեկան լրանալը նրանք կարող են
գործարաններում բանել միայն այնքան ժամա-
նակ, որ դպրոցական և կրօնական՝ դասերի ժա-
մերը՝ զուգարած գործարանի աշխատանքի ժամ-
երի հետ, չը պիտի 11-ից անցնեն: Ինչպէս կա-
նանց, նոյնպէս և երեխաների համար որոշված
են արդիւնադրութեան յայտնի ճիւղեր, ուր նը-
րանց արգելված է բանել:

Գործարանատէրերը պարտաւոր են ամենաուշը՝
15 օրվայ ընթացքում, վճարել իրանց բանաւորների
վարձը. վճարը տեղի պէտք է ունենայ գոր-
ծարանում: Արգելված է բանաւորների վար-

ձից մի բան հանել՝ մի որ և ից նպատակի
համար: Տուգանքը, որին հաղուադէպ ենթարկվում
է բանաւորը, նրա օրական վարձի կիսից չը պիտի
անցնի. այդ տուգանքն էլ մոռնում է բանաւորական
կատան: Տուգանք վերցնվում է միմյան այն դէպ-
քում, երբ գործարանի կանոնադրութեան մէջ
մտցրած կայ մի այդպիսի կէտ: Գործարանի կա-
նոնադրութիւնը կանոնադրութեան մէջ
կանանց և երեխաների, կանոնադրութիւնը
կարող է նրան վերաբնել: Այդ կերպով հա-
տատած կանոնադրութիւնը միայնում, կապում
է գործարանատէրը և բանաւորներին:

«Պատահանքներ» վերաբերեալ օրէնադրութիւնը
երեք անգամ (1875, 1881 և 1887 թվականներին)

փոփոխվել, ընդարձակվել է: Ահա ամփոփումն:
Գործարանում կամ երկաթուղու գծի վրա բան-
ւորի հետ տեղի է ունենում մի պատահար: Ըսկզ-
բունով գործարանատէրը կամ երկաթուղային
ընկերութիւնը պատասխանատու է և չէ կարող
խուսափել այդ պատասխանատուութիւնից: Եթէ
գործարանատէրը (կամ ընկերութիւնը) կարողա-
ցաւ ապացուցանել, որ պատահարի պատճառը
«անյաղթելի ոյժն» է, կամ իր վնասված բան-
ւորի յատուկ յանցանքը, այն ժամանակ նա պա-

*) «Միջադիւնի ոյժ» — force majeure — տակով
այստեղ հասկացվում է մի այնպիսի դէպք, որի
առաջն առնել չէր կարող ոչ մի զգուշութիւն, ոչ
մի արթնութիւն: Այդպէս է, օրինակ, վառօջը,
որը հարուածում է երկաթուղու գծի վրա բանող
բանաւորին:

հանգանակած գումարի մնացորդը՝ 1 ր. 10 կ.:
Ուրեմն նախկին 290 րուրի 87 կ. հետ այժմ
ունենք 553 րուրի 62 կոպէկ:
Ուրեմն մինչև այժմ ստացել ենք 5384 րուրի 47 կ.:
Ուղարկել ենք 4831 րուրի:

ՆԱՄԱԿ ԲԱԹՈՒՄԻՅ

Մայիսի 20-ին
Երեկ, ամսիս 19-ին, ուսումնարանի դասիճում
ժողով կար, որի գլխավոր նպատակն էր՝ մի նոր
և աւելի հիմնական միջոց որոշել՝ սովեականների
օգտին փող ժողովելու համար, որովհետև մինչև
այժմ եղած թէ Բարեգործական ընկերութեան
տեղիս ճիւղի և թէ մի քանի մասնաւոր ժողովա-
րարութիւնները այնքան անշնչան և չնչին են, որ
մինչև իսկ պատիւ չեն բերում Բաթումի նման քա-
ղաքին:

Ժողովում առաջին հարցը, որ յարուցվեց, այն
էր, թէ ինչ միջոց և ձև ընդունենք, որ կարողա-
նանք ժողովել փողը ինչ չօշակիւի գումար, իսկ
երկրորդ հարցն այն էր՝ թէ ում, կամ ուր ու-
ղարկվի ժողոված փողը, — արդեօք կրկին կարսի
կամ երանի սովեականներին, թէ ուղղակի թիւր-
քաց չայատաանի սովեականներին տեղիս ու տեղը
օգնելու համար: Երկրորդ բացատրութիւններից յի-
տոյ, ընդհանուր համաձայնութեամբ որոշվեց, որ
անհրաժեշտ է սովեական ժողովողներին տեղիս ու տեղը,
այսինքն թիւրքաց չայատաանում օգնութիւն հա-
ցնել, որով գուցէ մասամբ արգելած կը լինենք
այն սարսափելի զաղթականութիւնը, որը սկսված
է դէպի Անդրկովկասի սահմանները: Մինչդեռ ե-
թէ միմիայն արդէն զաղթածներին օգնելու լի-
նենք, որոնք գտնվում են ուստաց հողի վրայ, այն
ժամանակ, ընդհանրապէս, գուցէ աւելի նպաս-
տած կը լինենք զաղթականութեան զօրեղանա-
լուն, մանաւանդ երբ Թիւրքիայում կը լսեն, որ
դէպի Ռուսաստան զաղթածներին մեծ օգնութիւն
են հասցնում: Այդ հիման վրա ժողովը այն որոշ-
ման եկաւ, որ օգնութիւն պէտք է հասցնել նոյն
իսկ թիւրքաց չայատաան:

Յետոյ հարց դրվեց փող ժողովելու ձևի մա-
սին: Ուրեք կարծիք էին յայտնում, թէ գուցէ ա-
ւելի լավ կը լինի մի առ ժամանակ յետաձգել:
Սակայն մեծամասնութիւնը այն միտքն էր յայտ-
նում, որ պէտք է, առանց ժամանակ կորցնելու,
գործին ձեռնամուխ լինել, այս ձևով: Ընտ-
րել մի մասնախումբ, որը ամեն գնահատելի
էլ ներկայացուցիչ ունենայ՝ ինտելիգենտ, վաճա-
ռական, արհեստագործ, գործակատար, բանուոր,
մշակ, նոյնպէս և կանանցից: Ընտրվեցին մաս-
նախմբի համար 15 անդամներ և 5 կանայք: Յան-
կալի էր, որ այս անգամ մեր հասարակութիւնը,
մի կողմ թողած ներքին, տեղական անհամաձայ-
նութիւնները, ընդհանուր համերաշխութեամբ մաս-
նակցէր այդ գործին, ի նկատի ունենալով նը-
պատակը: Ուրիշ բան է եկեղեցու չինութիւնը,
քահանայի, երէցի, իւրի, ուսուցչի այս կամ այն
լաւ կամ վատ վարմունքները, որոնց մասին
կարելի է յետոյ էլ վճիռ կայացնել: այլ բան
է զրացած ժողովողին, այն էլ առանց այդ աղ-
քատ և հարստահարված ժողովողին հաց հասցնե-
լու: Յոյս ունենք, որ այս համակրելի գործը մեր
հասարակութիւնը պատուով կը վերջացնէ:

Գ. Գ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Լսում ենք, որ պրոֆէսոր Անդրէաս Արծրունին
այս ամառ զարու է կովկաս՝ գիտական նպա-
տակով մի ճանապարհորդութիւն անելու: Համար
ի միջի այլոց դիտարկութիւն ունի զնալ Արա-
րատի կողմերը:

Ինչպէս երևում է մեզ հասած տեղեկութիւն-
ներից, Ունգարիայի հայերը մասնակցել են ուն-
գարացիների ազգային սուգին, հռչակաւոր հայ-
րենասէր Կոչոստի մահուան առիթով:

Մոսկովայի Հնագիտական ընկերութեան վերջին
նիստում, նախագահ կոմսուհի Ռուբինովա, որպէս
անուն է «Русск. Вѣд.» լրագիրը, հաղորդեց, որ
Թաղաւոր Կայսրը 10.000 ր. է շնորհել ընկերու-
թեանը փորութեանը ժողովողին հաց հասցնե-
լու: Ընկերութեան անելու համար կովկասում և Ռուսա-
ստանի արևելեան նահանգներում:

Մեզ հաղորդում են, որ Թիֆլիսի թատրոնի
չինութեան գործը առաջ է գնում: այժմ արդէն
սկսել են չինել թատրոնի ներքին մասերը:

Մեր խմբագրութեան մէջ ստացվեց նոր լոյս
տեսած մի գրքի՝ «Բանուորների ապահովացումը»
վերնագրով, աշխատութիւն Գեորգ Գարաշեանի
Գա մի տեսութիւն է այն միջոցների մասին, որ
ձեռք են առնված եւրոպական զանազան երկրի-
ներում՝ բանուոր դասակարգի վիճակը ապահովե-
լու համար: Գրքից արտատպված է «Մուրճ»
ամսագրից և հրատարակված է Արշակ Օհանեանի
ծախսով: Վաճառումից զոյանալի գուտ արդէն-
քը յատկացրած է սովեականների օգտին: Գինն է
30 կոպէկ:

Յօգուտ Գրքի գոր Արծրունու արձանի
և գրուած քննարկի ապագրութեան ստա-
ցանք: 1) Ա. խալցիսայից, Արամ Առաքելեանի
միջոցով, 10 ր., հանգանակած հետեւեալ անձինք-
ներից. Ա. Ալվազեան, Ա. Բուդուգեան, Յ. Նալ-
բանդեան, Ստ. Ստեփանեան, Սարգսեան, Առա-
քելեան մի-մի ր., Ս. Վերաբեան, Կ. Գարա-
շեան, Խ. Ջարակեան, Մ. Գիւրգենեան, Ն. Լալիթեան,
Ս. Աղաբեան՝ 50 ական կ., Գալիթ Բաշո-
նեան՝ 2 ր. 3) Թիֆլիսից, հին-նախնականից
և նոր-բայազետից հանդերձավաճառներին մէջ, մա-
տաղի համար հանգանակած գումարից՝ 5 րուրի:
Ուրեմն նախկին 3292 րուրի 28 կ. հետ այժմ
ունենք 3309 ր. 28 կոպէկ:

Մեր քաղաքային դուռայի մայիսի 14-ի նիս-
տում, դուռայի քարտուղար ընտրվեց Ս. Չրեւանի:

Կովկասի հայոց Բարեգործական ընկերութեան
խորհուրդը խնդրել է մեզ հրատարակել հետե-
ւեալը. «Թիֆլիսի Հայունեաց Բարեգործական ըն-
կերութեան վարչութիւնը ի դէսն ա.տ. Ն. Ալի-
խանեանի, Հ. Ալեքանդրեանի, Վ. Ռոտմիս-
տի, Ս. Երեցեանի, Ռ. Տէր-Յովսէփեանի, Լի-
խանեանի օր. Ս. Արդուրեանի և օր. Մաթեֆեա-
նի, ի դրուակցութիւն և ի մասնակցութիւն հրա-
ւերելով ա.տ. Ն. Ալեքանդրեանին, Ս. Երեցեանին,
Ս. Տէր-Յովսէփեանին, Մարիամ Խոսրովեանին,
Վալդաւէ Ալիխանեանին, Եղիսաբէթ Առաքելեա-
նին, օրիորդ Վարվառէ Գոնդրեանին և այլ Ն. Տէր-
հանեանին, Գ. Բաշոնդեանին, Ա. Մանդի-
նեանին, Մ. Խալաթեանին, Ն. Ալիբեանին, Մա-
միկեանին և Ն-ին, որոշել էր տալ յօդուտ ըն-
կերութեան մի ներկայացում, որի արդիւնքը
ամբողջովին պէտք է յայտնային Երևանի և
կարսի նահանգների սովեականներին: Այդ ներկայա-
ցումը տրվեց անցեալ ապրիլի 21-ին և խաղա-
ցին «Բանուոր օջախ» կոմիտէին, հեղինակու-
թիւն Գ. Ստեփանեանի, որ յանձն էր առել
ներկայացման գեղարուեստական մասի հսկողու-
թիւնը: Մուտք եղել է՝ տոմարների վաճառու-
մից 1315 ր. 14 կ., պրէմիաներ ստացվել են
զանազան անձները—211 ր. 90 կ., ընդամենը
1527 ր. 4 կ., ծախս եղել է 200 ր. 64 կ., ու-
րեմն գուտ արդիւնք—1326 ր. 40 կոպէ: Հրա-
տարակելով այս հաշիւը, խորհուրդս սեպտեմ-
պարտաւորութիւն է համարում հրապարակաբար
իր խորին շնորհակալութիւնը յայտնել թէ Հայու-
նեաց Բարեգործական ընկերութեան մեծաբոլոր
վարչութեան, թէ այն ազնուհի տիկիններին, ո-
րոնք աջակցել են վարչութեան, թէ ներկայաց-
ման մասնակցող տիկիններին, օրիորդներին և
պարոններին և թէ մեծ. պ. Գ. Ստեփանեանին,
որոնց ամենքի միաբան աշխատութեամբ և ա-
շխատութեամբ զուգի է բերվել բարենպաստակ
գործը և որոնց շնորհի կարելի է եղել ստանալ
1326 ր. 40 կոպէկի մի խոշոր գումար սովեա-
կների համար: Ընդ մին խորհուրդս կցում է, որ
իր ժամանակին ընկերութեան տեղեկագրի մի-
ջոցով կը հրատարակվեն մանրամասն կերպով թէ
նուիրատուների անունները և թէ ամբողջ հա-
շիւը:

Գեորգի մեզ գրում են. «Այս օրերս ճանա-
պարհ եմ գնում Երևան մի խումբ տիրացու-
ների՝ շրջակայ գիւղերի համար քահանայ ձեռնա-
դրվելու: Այդ խումբը նշանաւոր է արդէն նրա-
նով, որ ահապէս գումարով վարձել է այստեղ
արեւօկատու թ մամբ պարագայով մի անձնա-
ւորութիւն, որպէս զի նա իրանց տանի և գործը

աշխատի, և այդ պարունը գնացել է իրեն ժող-
վրդի ներկայացուցիչ: Ինչո՞ք չէ ասում ժողովուրդը
թէ՝ ում յոյժը մարդ զառնալուց կտրվում է, վա-
ղում է քահանայ գառնում: Ամբողջ Զանգեզուրը
լցված է քահանաներով, այնպէս որ ուրիշ տեղե-
րին կարող են վտխ տալ: Ուրեմն ինչո՞ք համար
են նորերը»:

ԲԱՆՈՒՄԻՅ. մեր թղթակիցը խնդրում է մեզ
տպագրել հետեւեալը. «Մշակի» № 57 տպագրված
մեր թղթակցութեան մէջ սպրդել է մի սխալ:
Մենք գրել էինք, թէ Զմէկեան ամուսնանալու
«Պէկա» ներկայացնելու համար յատկապէս հրա-
ւերված են եղել Թիֆլիսից, սակայն, ինչպէս մեզ
նկատում են գործին աւելի մօտիկ կանգնած
մարդիկ, այդ սխալ է: Եղելով թիւնը այսպէս է.
Զմէկեան ամուսնանալու իրանց մասնաւոր գործով
Բագու էին եկել. տեղիս սիրողները՝ օգտվելով
հանգամանքից, խնդրում են ներկայացնել «Պէկա»
և Զմէկեան ամուսնանալու ընդունում են այդ խն-
դը»:

ՂԱՍՏԻՅ մեզ գրում են. «Վերջապէս Ղալաւում
էլ սկսվեց հանգանակութիւն սովեականների օգ-
տին: ձիւղ է, մի փոքր առաջ Ղալաւից գումար-
ներ ուղարկվեցին, բայց զրանք մասնաւոր չըլանե-
րում էին միայն հանգանակված: Հանգանակութիւն
կատարվում է տիկին Ն. Խալաթեանի, Գ. Ե. Մեղի-
տուհեանի և Ն. Միշուրեանի ձեռքով: Մի քանի
օր է միայն, ինչ որ սկսել են, և հաւաքած գու-
մարը համար է մօտ 1000 րուրու: Բացի դրա-
նից չուտով սովեականներին օգտին տրվելու է սի-
րողների մի ներկայացում, տեղիս ուսուցչներին
նախաձեռնութեամբ»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԹԻՒՐԲԱՅ ՀԱՅԱՍՏԱՆԻՅ

Խնուսում տիրող սովի մասին «Արեւտար»
լրագիրը գրում են հետեւեալը.

«Անհատական գառնացած է Խնուսից ին կեսերը:
Հունձքի ժամանակ ամեն ոք մտաւոր ապագային
դառնութեան գուշակութիւնը կընէր. այժմ իրա-
կանացած են այն ամեն գուշակութիւնը: Համապա-
գորդ հացին չգոյութիւնը շատեւ աւելին իրեց
արտաւորել հեղեղներ: Մինչ կանցնել փողոցներէ,
չնիք կրնար չը լսել մանաւանդ քաղցիչ մանուկնե-
րու ճիչեր, և ինչ կընէ դժբախտ հայրիկն ի լուր
այդ սրտածմկի օղբերուն: Չուղբելով լսել, մանա-
ւանդ տեսնել իր սիրելիներին մահը, և քիչ մը
բան ձեռք բերելու յուսով, գիւղ մը կը դիմէ: Քիչ
մը առնել կանցնել, և ահա կը լսենք սովեալ ըն-
տանիքին հօր մահը: Մէկ քանի աւուր անօթու-
թիւնը և ստտիկ ցուրտը փութացուցնել եղկելին
մահը: Երկու յոյժ ծայրայեղ ծայրերու ընդ մէջ կը
հնձէ այս ժողովուրդն և կը փչէ իր հողին: Չա-
ւորութիւնը, իրեն գործիք ունենալով սաստիկ
ցուրտը, տարաւ իր գոհերը, և, աւուր, քանի քա-
նի գոհեր ևս պիտի տանի մինչև համին նոր հունձ-
քը: Անկայանի կը տեսնուի, որ այս ճիւղաւը աւե-
լի կոտորած պիտի ընէ, քան զոր ըրաւ անցեալ
տարուան քոլերան հոս»:

ԻՐԱՆԻԱԿԱՆ ՊԱՏԱՄԱՌՈՐՆԵՐ

Իրանական պատգամաւորները, թէ պարսե-
լիստները և թէ հակապարսելիստները, ներկա-
յումս զբաղի մեծ կարոտով ինչ են զգում,
այնպէս որ «Freemans Journal» լրագրում մին-
չև անգամ տպվեց Ժիւստին Մակ-Կլեյտի հրա-
ւերը դէպի իրանական ժողովուրդը: Այդ շըր-
ջաբերական հրաւերի մէջ ասված է, որ եթէ
իրանական ժողովուրդը օգնութեան ձեռք չը
մեկնի իր պատգամաւորներին, նրանք անկարող
կը լինեն կատարել իրանց պատգամաւորական
պարտաւորութիւնները և, հետեւաբար, իրան-
գիտի ինքնավարութեան գործը շատ կարող է
վնասվել զրանից:

Ժիւստին Մակ-Կլեյտի աւելացնում է, որ այս
տարի շատ բան չէ կարելի սպասել Ամերիկայից
և Աւստրալիայից. այն տեղ ամենուրեք գործերը
կանգ են առել: Ամբողջ յոյժը, հետեւաբար, նրա
վրա է, որ խեղճ «Պատգամ-Իրանգիտ» կրկին
բաց կանի իր աղքատիկ քսակը և վերջին միջոց-
ներով կը պահպանի իր ներկայացուցչներին
վնասումներէն պաշտպան:

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՅ

Թաւրիզ, մայիսի 3-ին
Քահանայական խնդրը մեղանում էլ հերթա-
կան խնդրներից մէկն է, որը պահանջում է ան-
յետաձգելի և շուտափոյթ լուծում: Թաւրիզի եր-
կու թաղերում ևս այդ պահանջը զգալի է մանա-
ւանդ Բերդաթաղում, որի մէկ քահանայ, թեմա-
կան առաջնորդի բացակայութեան ժամանակ,
հրաւիրված է, եթէ չնիք սխալվում, հողաբարձու-
թեան կողմից Մուսաբար գիւղից, որի միակ
ծխական քահանան էր և որով գիւղը զրկվել է
ծխական քահանայից:

Որքան մեղ յայտնի է, Թաւրիզի ուսուցչական
խմբից յարմար և քահանայական կոչման հա-
մար համապատասխան անձինք ցանկութիւն ու-
նեն քահանայական կոչումն ընդունելու: Սակայն
արդեւ ինչո՞ք քահանայական անապահով դուռ-
թիւնը և նիւթական միջոցները մուրացկանու-
թեան ձեռով հայթայթելն է, մի ցաւ, որ շատ
հին է և տարածված ամեն տեղերի հայրիկ մէջ:

Շատ պարզ է, որ իր պատիւը համակցող ան-
հատը ոչ մէկ զէպքում իրան թիւյ չի տալ, աւելի
շատ փող ձեռք բերելու համար՝ զանազան անվա-
յել միջոցների դիմելու և ժողովուրդից բիստի-
ն և ստանալու համար՝ եկեղեցում թաղախ պոռ-
տեցներու: Ահա միակ պատճառը, որը ստիպում
է կրթված, զարգացած և քահանայական բարձր
կոչման համապատասխան անհատներին խոյս
տալ այդ ըստ երևոյթին սրբազան պարտաւորու-
թիւններից, թողնելով ասպարէզը տղէտ, անուս
և իրանց անուշը ուղիղ ստորագրել չիմացող տի-
րացուներին...

Սակայն մինչև երբ պէտք է այդ կարևոր ա-
պարէզը մօտապօլիս դառնայ տիրացու-համբալ-
ների, մինչև երբ պէտք է մենք զրկված լինենք
ս. Աւետարանի ճշմարիտ լոյսը Աստուծոյ տաճա-
րից քարոզող անկաշառ սպասուորից...

Միթէ ժամանակը չէ տակաւին վերջակէտ դը-
նել տիրացուական այդ տեղը հոսանքին և աղա-
տել մեղ դրանց իտպան գործունէութիւնից:
Մշտական ուժերով քահանաներ պահելու խնդիրը
շատ վաղուց է արժարվել մամուլի մէջ, որը,
տարաբաղաւոր, դեռ ևս իր ցանկալի լուծումը
չէ ստացել: Տօղբերի գրողը մի քանի անգամ ա-
ռիթ է ունեցել այդ խնդրի մասին խօսելու այս-
տեղի հայ հասարակութեան հասկացող մասի
հետ, որոնք զգալով խնդրի մեծութիւնը, ամենայն
պատրաստականութեամբ տրամադրվել են
ցոյց տուել իրականացնելու այդ գաղափարը:

Այդ տեսակէտից, անկարելի է չորախանայ,
որ Թաւրիզի հասկացող հայն էլ, ըմբռնելով խնդ-
րի վնասութիւնը, գովելի եռանդով աշխատում է
իրագործել այդ համակրելի գաղափարը: Ինչ ա-
սել կուզի, որ գործի մեծութեան հետ կապված
են և ահապէս դժուարութիւններ, որոնք այնքան
էլ հեշտ չեն ներկայ հանգամանքներում առանց
դժուարութեան գլուխ բերել: Բայց որովհետեւ
խնդիրը որոշ չափով և որոշ շրջանում գրեթէ
հասունացել և ընդունելութիւն է գտել, այդ իսկ
պատճառով մենք իրաւունք ունենք ենթադրելու,
որ մօտիկ ապագայում նա Թաւրիզում իր ցան-
կալի լուծումը կը ստանայ: Այդ բանին կարող
են նպաստել տեղական զպրոցները, որոնք մշտա-
պէս 400 րուրիով—մօտաւորապէս 200 թուման—
կարող են որպէս ուսուցիչ՝ վարձել քահանային,
հեշտացնելով կրթված, զարգացած քահանաներ
ունենալու գործը:

Պատրիկ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Կ. Պոլսից հեռագրում են, որ տիկերական
պատրիարքը կրկին բողոք է տուել՝ բողոքական
եպիսկոպոսներ նշանակելու դէմ Մակեդոնիայում:
—Վիեննայից հեռագրում են. «Պֆիխայի ուսա-
նողների մէջ յուզմունքներ են սկսվել: Ստամբու-
լով հիւանդ է: Բողոքական առաջակախմբերը
ներս խռովեցին Մակեդոնիա և այնտեղ՝ նրանց ու-
ղղաբանականութեան մէջ ընդհարումներ տեղի ու-
նեցան»:

—«Times» լրագրում տպված է մի առաջնոր-
դող յօդուած այն վտանգների մասին, որ գոյու-
թիւն ունեն շրջկատարանի ներքին գործերում: Տե-
ղացի հնդկները առուելութիւն են զգում դէպի
անգլիացիները, որովհետեւ նրանց թէ նիւթա-
կան և թէ բարոյական շահերը զո՞ են բերվում
Մանչեստրի բաղաւաղաբարձարանների շահե-

բին: Ժողովուրդը գործելով է, որովհետև անդիլան միտնանքները միշտ և անդադար վերադարձնում են տեղացիների կրօնական զգացմունքները և ձեռներ: Նրանց, այսինքն միտնանքների, ջերմանանքը թիվները այնտեղն է հասնում, որ տեղական լրագրիներում արդեն լուրեր են տարվում: տեղացիներին բռնի կերպով քրիստոնեությունը ընդունել տալու մասին: «Times» լրագիրը այնպես է, թե հարկավոր է առեր արդարեւ լրագրիները տեղացիների կրօնին, ձեռներն և ցանկություններին:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

ՏԻՐԱՅՈՒՐԱՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

Տիրացուարանում քննությունների ժամանակ քահանայ-ուսուցչի և տիրացու-աշակերտի միջև հետեւեալ հարց ու պատասխանն է տեղի ունենում:
Ուսուցչի. — Վարդանի մասին մի բան լսել ես, ով էր կամ ինչ գործեր կատարեց նա:
Տիրացու. — Հրամանները, տէր հայր, լսել եմ, որ նա ճշմարիտ հաւատացեալ հայ քրիստոնեայ էր:
Ուսուցչի. — Քրիստոսից առաջ էր ապրում նա, թէ յետոյ:
Տիրացու. — Առաջ, շատ առաջ:
Ուսուցչի. — Ինչ ես կարծում, մօտաւորապէս քանի տարի առաջ:
Տիրացու. — Վաղած, դուզն ասած լաւ չեմ յիշում, տէր հայր, ամա հաւատաս, 300 տարի առաջ ըլի: Քրիստոսից:

Մի ընծայացու-տիրացուի հարցնում են թէ՛ Քրիստոսի ժամանակ աշխարհին երևաին հայեր կային: Ոչ, պատասխանում է տիրացուն, այն ժամանակ հայերը որտեղից էին որ, բոլորը ջնջուներ էին էլի, և այս բանը նա հաստատում էր իր լեզուի հարաւորութեամբ և երեսի քրտինքը սրբելով:

Առաջ է անցնում մի առաջադէմ տիրացու, որի աչքերը դուշակել էին առաջին, թէ նա իր նախնականութեամբ բոլորին զարմացնելու հուշար: ունէր: Նրան հարցնում են — Ըստիկին կարծիք ձուր գործածություններ ինչ բանի նշան է: — «Քրիստոսի մարմնի և արեան միատեղութեան նշանն է», պատասխանում է քահայ ի քահանայ: Յայտնի չէ միայն, ձուր միջոցին է նրան այդ եղբայրացութեան բերել, թէ կարծիք գոյնը:

Պարբերական թերթերում զեկալարներէն մին, որ իր սխալ և անամական ընթացքին պատճառով ներթափանց անհասկանալի վիճակի մը մէջ ինկած է և իր համազգայիններէն չսկս մտաբանելու, և արտաքին հաշակված է, որ մը փոստատուն կերթայ իր հասցէին եկած փոքրաթիւ ստակն ստանալու: Սակայն որքան մեծ կըլլայ իր դարմանը, երբ պաշտօնակցին չարագոյծ լուր մը կը լսէ, թէ ստակ ուղարկողն վերադարձնում է փոստատունէն իր ծրարին: Այդ գէշ վիճակին մէջ յուսահատ խմբագրին աղերս մը միայն կընէ պաշտօնակցին և կաղաչէ թող տալ զինքն ստանալ ծրարն և ստորագրել մատենին մէջ նախկին աւուրած մատենի մը, որպէս թէ ստակն յանձնած եղբը են, երբ ստակներ են ծրարն վերադարձնելու պատճառ: Սակայն խմբագրին սեկրետ կըլլէ փոստատունէն և կը գրկիլ այդ ցանկալի դրամին, որպէս կիսամահ հիւանդն կաղաչուիլ կաթիլներէն:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

ՍՈՑԻԱԼ, 23 մայիսի կառավարութիւնը վերացրեց արտասահմանից ատացվող շատ ֆրանսիական և ուրիշ լրագրիների արդիւրը: Երբայթ գիշերը հանգիստ անցաւ, փակված են միայն հասարակական այգիները, ուր առաջ ցուց անողներն էին գումարում, փողոցներում էլի զօրքեր են կանգնած: Կէսօրին մօտ՝ ամբօխը հաւաքվեց պալատի առջև և ողջունեց պատշաճաբը զուրս եկած կօրտրդեան պրինցին և նրա ամուսնուն: Քաղաքի զինուոր տակտրակները պատրաստում են պատգամաւորութիւն ուղարկել պրինցի մօտ՝ նորհալալութիւն յայտնելու միտարարական ճգնաժամի ժամանակ արած կարգադրութեան համար: Այսօր կնքեցին զանազան հասարակական հիմնարկութիւնների զանքերը, որոնց թւում աղբային փողովի արկնիլ և դուսնան: Կօրտրդեան պրինցը այցելեց շաբաթ Ստամբուլիլին և մնաց նրա մօտ մի քիչ ժամանակ, ապա պրինցը գնաց Ստամբուլի և Գրէկովի մօտ:

ՏԻՐԱՅՈՒՐ, 24 մայիսի Մանչուրիայի կիրիւնեան գաւառում պատմաբանութիւնը գործանում է՝ տեղացիների և կօթիսանների մէջ եղած հողային վեճերի պատճառով: Ապստամբների հետ միացան մօնղոլներն հնձեղ աւաղակարները, որոնք զինուորված են մազգիլիկա անուանված հրացաններով: Ջարդեցին կառավարական զօրքերը ամեն հանդիպումների ժամանակ և դրանցին մի քանի նշանաւոր կէտեր, ի միջի այլոց, զինապա-

հետը կիրկնում, ուր պահվում էին 100,000 հրացաններ: Չը նայելով մի այդպիսի վտանգաւոր դրութեանը, Ալի-Քանը Չանգ դուռ ոչինչ միջոցներ ձեռք չառաւ, ապստամբութիւնը ճնշելու համար: Այժմեան ապստամբութիւնը նման է 1891 թւի չարժմանը, սակայն այդ ապստամբութիւնը չունի հակաքրիստոնեական բնաւորութիւն:

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 24 մայիսի: Սենեկապետ իզդուրկի միտարար-ըզիդէնտ է նշանակված հոմալական պապի մօտ:

ՎԻԵՆՆԱ, 24 մայիսի: «Neue Frei Presse» լրագրում տպված է խօսակցութիւն Նաչէվիչի հետ, որը յայտարարեց, թէ թիւրքայի և ուրիշ պետութիւնների հետ առաջկան պէս բարեկամութիւն կը պահանջի, ժամանակը Ռուսաստանի վերադարձմամբ Ստամբուլիլ յանդուգն զիջք չէ բռնելու:

ՍՈՑԻԱԼ, 25 մայիսի: Նոր միտարութեան «СВОБОДНО СЛОВО» օրգանը ասում է, որ Ստամբուլիլ ընկաւ իր սեփական մեղքերի ծանրութեան տակ՝ բողոքական ժողովուրդը նրա բռնութիւնները այլ եւ տանել չէր կարող: Ստամբուլիլ միայն աւ երես հրաժարական տուեց, այն ինչ խկապէս նա դիտաւորութիւն ունէր ստիպել կօրտրդեան պրինցին չընդունել հրաժարականը: Սակայն, այդ խաղը նրան չաջողեց, Ստամբուլիլ անկողում վերջնականապէս օրոշված էր, հենց որ նա սկսեց ձեռք մեկնել զէպի զիկաւորութիւնը: Այժմ կառավարչութիւնը յանձնված է փորձված և անկիւ մարդկանց: Նրանց զինուոր զօրք կը լինի զաղարեցնել ոտարկանական կառավարչութիւնը և պետական գումարների վառնումը:

ՀՈՒՄ, 25 մայիսի: Այսօր պատգամաւորների ժողովում, լսոված ուղարկութեան ժամանակ, կիրայի յայտնեց, որ միտարութիւնը հրաժարականի ինչոյրը տուեց թագաւորին, որը կը հաղորդէր իր վեճեր: Միտարները մնում են զի վերջը իր վեճեր: Միտարները կառավարեան պաշտօնում ընթացիկ զօրքերը կառավարելու և բիւզժանները իրաւորելու վարչական ճանապարհով: Նիստը դադարեցրած է:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳԻ ԲՈՐՍԱ

Մայիսի 24-ին	
Լճուցի միւս 10 ֆունտ արծի . . .	93 ր. 50 Կ.
Բերլին միւս 100 մարկ . . .	45 ր. 75
Պարիզի միւս 100 ֆրանկ . . .	37 > 05
Ոսկի . . .	արծի . . . 7 > 52
Մաքսային կուպոններ . . .	150 > 25
Արծաթ . . .	— > —
Բորային դիսկոնտ . . .	5 > 7
Պետ. բանկի 5% տոմս 1 շրջանի . . .	101 1/8 > —
— — — 2-րդ . . .	101 1/8 > —
— — — 3-րդ . . .	— > —
5% ոսկեայ լեյնտա 1884 թ . . .	— > —
4 1/2 ոսկեայ փոխառութիւն . . .	160 > —
Արկեւեան 5% փոխառ. 1-ին շրջ. . .	— > —
— — — 2-րդ . . .	101 1/8 > —
— — — 3-րդ . . .	101 1/8 > —
— — — 4-րդ . . .	— > —
Ներքին 5% առաջին փոխառութ. . .	247 > —
— — — երկրորդ . . .	225 > —
Պետական երկաթուղային ընտա . . .	102 > 50
4 1/2 ընտա . . .	— > —
4% ներքին փոխառութեան . . .	97 > —
5% գրաւ. թղթ. աղն. կալ. բանկի . . .	101 > —
Աղն. կալ. Պետ. բանկի խաղարկութ. . .	— > —
Գրաւ. թղթ. . .	101 > —
4 1/2% վիպակ. գիւղ. հող. բանկի . . .	101 > —
4 1/2% գրաւական թղթեր կալուած. . .	— > —
Պետ. կրթութ. ընկիւ. մուտալ. . .	154 > 25
— — — թղթալ. . .	100 1/8 > —
Պետերբուրգի քաղաքային կրթութ. . .	— > —
ընկերութեան օրիգայանները . . .	102 3/8 > —
Մոսկույի քաղաք. օրիգայաններ . . .	101 > 75
Օղէսայի . . .	101 > 25
Թիֆլիսի . . .	100 > —
Գրաւ. թղթ. թիֆլիսի կալ. բանկի . . .	101 > —
— — — փոխալի . . .	101 > —

Ս. Պետերբուրգի քաղաքի արամադրութիւնը խաղաղ է, առանց զօրքերի:

ԽՈՐԱԳՐԻ ԱԼԷՔՍԱՆԻ ՔԱԼԱՆԹԱՐ ՀԱՄԱՐԱԿԻՆ՝ Մ. ՄԷԼԻՔԱՆԱՍԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հրատարակչական ընկերութեան վարչութիւնը յայտնում է, որ մամուլին է յանձնված «Մուկուլի» հաւիլ՝ զբոյցը, Մանկական զրադարանի համար:

1—1

Վաճառվում է, քանդակագործ Յէյուլի-նի պատրաստած,

ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆՈՒ ԿԻՍԱՐԶԱՆԸ

Ծախվում է թիֆլիսում Եփրեմ Ծատուրեանի խանութում: Գինն է 10 ր. օտար քաղաքացիք ճանապարհահամալսի համար պէտք է վճարեն 2 բուրլի:

(Ձ 52)

4—5

Ս. Վ. ԱՐԴԱՌԹԵՆ-ԵՐԿԱՅՆԱՐԱՋՈՒԿԻ

ԴՊՐՈՑ-ՊԱՆՍԻՕՆ ԵՒ ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԵՋԸ

Մնում է թիֆլիսում (Միտայլովսկայա փողոց, № 154) և ընդունում է ամառը երկ-խաներ՝ բոլոր զարոցների համար նախապատրաստելու:

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԵՋՈՒՄ չորեքշաբթի օրերը մանուկների համար ածվում է և-րաժշտութիւն 5-ից մինչև 8 ժամը երեկոյան: Բացառապէս ԱՅԳԻՈՎ օգտվել ջանկար-ցողները, թէ չորեքշաբթի և թէ ուրիշ օրերը, կարող են հարցնել պայմանների մասին:

(№ 59 Հինգ.)

1—4

ԹԻՖԼԻՍԻ ԿԱԼՈՒԱԾԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԹԱՏՐՈՆ

Հինգշաբթի, մայիսի 26-ին, կը լինի

ԵՐՐՈՐԳ ԵՒ ՎԵՐՋԻՆ

ՀԱՄԵՐԳ ԿԱՐԱՄ-ՄՈՒՐԶԱՅԻ

Խումբը բաղկացած է 80 երկօեւ անձինքներից.

ԿԱՆԱՆՅ ԽՈՒՄԲԸ ԱԽԱՅԻԱՅԻ ՇՈՐԵՐՈՎ

I

- | | |
|--|-------------------------------|
| 1) Բաւ է եղբայր երբ ճնշել | Խումբը |
| 2) Երազ Դահաղիկեանի | պ. Բարխուդար. և կանանց խումբը |
| 3) Հրեշտակ օսկիփեւոր, նուազ. Չուխաչեանի. | Խումբը |
| 4) Ծիծեռնակ | պ. Յակօբեան I և 2 խումբը |
| 5) Հանգիստ իմ անոյշ, Դահաղիկեանի. | պ. Բարխուդար. և խումբը |
| 6) Զէժ, Ժողովրդական | Երկու խումբը |

II

- | | |
|--|------------------------------|
| 7) Հայտատանի արեգակը. փոխադրութիւն | Խումբը |
| Կարա Մարդալի | Երկու խումբը |
| 8) Ջան զիւլում, Ժողովրդական. | պ. Բարխուդարեան և խումբը |
| 9) Միլուհի ընդ համար, Ժողովրդական. | պ. Յակօբեան I և խումբը |
| 10) Համեստ աղջիկ, Ժողովրդական. | պ. Յակօբեան II, Թէյմուրազեան |
| 11) Մուկուլ աղբեր, Ժողովրդական. | և երկու խումբը |
| 12) Մեր կեանքի նման ոչ ոք կեանք չունի. | Խումբը |

Սկիզբն է 9 ժամին երեկոյեան: Տեղերի զինը սովորականն է:

Տոմսակները ծախվում են պ. Ե. Ծատուրեանի լամպայի խանութում, Եղբ. Խաղա-վերդեանների խանութում և Մ. Ս. Սարգսեանի խանութում, Միջի փողոցում, իսկ հա-մերի օրը թատրոնի կասսայում:

1—1

ԿԱՅԻԲԵՐԸ ԿՐԱԿԻՑ ՓՈԽԱԳԱՐՁ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ

ԹԻՖԼԻՍԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ տեղեկացնում է ըն-կերութեան պապ. անդամների ընդհանուր դիտութեանը, որ ԿԻՐԱԿԻ ՄԱՅԻՍԻ 29-ԻՆ ԱՌԱՌՈՏԵԱՆ 10 ժԱՄԻՆ, քաղաքային դահլիճում նշանակված է

ԱՐՏԱԿԱՐԳ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

Հետեւեալ հարցերը վճելու համար.

- 1) Վերաստուգող մասնաժողովի առաջարկութիւնը՝ յօդուտ երկու զիրկտօրների հաւասարապէս 15% հանել տարվայ ընթացքում բոլոր ձեռք բերված ապահովագ-րութիւններից:
- 2) Ն. Ի. Թամաշիլ—ապահովագրողի առաջարկութիւնները հետեւեալ հարցերի վե-րաբերմամբ.

- ա) քաղաքի բարանտիւսն 50,000-ից մինչև 100,000 ր. մեծացնելու մասին:
 - բ) Ընկերութեան նախահաշիւը. փոփոխելու մասին:
 - գ) Հրաշէջ խմբին դրամական պարգև տալու մասին:
 - դ) Միջնորդի, որ ընկերութեան պոլիսները ընդունվին որպէս զրաւ՝ թաղաւորա-կան աճուրդների ժամանակ:
 - ե) Հաշիւները լրագրիներում տպելու և
 - զ) Մի յանձնաժողով ընտրելու, որը պէտք է միջոցներ գտնի ընկերութեան զօր-ծերը զարգացնելու և ապահովագրութիւնը պարտաւորեցուցիլ համարել տալու:
- 3) Պ. Ա. Իլմայլովի հաւատարմագրով ապահովագրող անդամի առաջարկութիւնը՝ նախկին Պրիկազում զրաւ զրաւ կալուածների արտօնաւոր ապահովագրութեան մասին:
 - 4) Վարչութեան անդամի մէկ կանդիդատի ընտրութիւնը դուրս գնացածի, Ա. Թա-յիրովի փոխարեն, որին Գուման վերաստուգող Մասնաժողովի նախադահ ընտրեց:
- (№ 58) 2—2

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿՐԻԴԻՏԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ

արանով տեղեկացնում է ընդհանուր դիտութեանը, որ այն անձինք, որոնք ցանկանում են վարձել Տէր-Ասատուրովի նախկին կալուածքը, որ գրան-վում է 5-դ քաղաքամասում, Երևանեան հրապարակի, Միջի-փողոցի և Գրեմաշայա փողոցների վրա, կարող են դրա մասին զրաւոր յայտարարութիւններ տալ իրանց պայ-մաններով ամեն օր, օրվայ 11-ից մինչև 2 ժամը, մինչև այս տարվայ յունիսի 1-ը:

(№ 57)

3—3

ԿՈՎԿԱՍՏԵԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Մ. ԴԷ-ԼԱ-ՖԱՐ ԵՒ ԸՆԿ.

- Կատարում է հետեւեալ օպերացիաները.
- 1) Տօկտարեր թղթերի ապահովութեամբ՝ փոխառութիւն.
 - 2) I, II, III խաղարկութեան տոմսանքների վաճառումը, ԱՄՍԱԿԱՆ 5 ԲՈՒՐԼԻ ՎՃԱՐՈՒՄՈՎ.
 - 3) Փոխանակագրեր է տալիս Ռուսաստանի զանազան քաղաքների վրա.
 - 4) Ընդունում է ժամանակաւոր և մշտական աւանդներ.
 - 5) Բաց է անում ընթացիկ հաշիւներ՝ չէկերով.
 - 6) Ընդունում է in casso վեկսելներ և ուրիշ գօյումէններ:
- Լիազօր՝ Ս. Պ. ՊԱՎԼՈՎ, ԹԻՖԼԻՍ, Սէրգիևսկայա փողոց, № 1.
Գանձա կօււմ գործակալն է՝ Նիկօլայ Կարամանովիչ ՕՅԱՆԷՍՈՎ:
(№ 15) (Հ) 16—50